

ՆԱԽՈՒ ԳՎՐՅԱՆ  
ԴՐԱԿԱՆԻ



891.99

Զ - 39

ԴՐԱԿԱՆԻ

ՏԵՐԵՎ 1330 ՅԵՐԵՎԱՆ

891.99  
2-39 *ար*

19 NOV 2011

ՆԱԽՐԻ ԶԱՐՅԱՆ

ՈՒԽՏԱՆԻ ՔԱՐԱՓԸ

ԵՊՈՂԵԱ

ԹԵՏՐԱԿԱՆ  
ՄԵՏՐԱԿԱՆ — 1980

Առաջին Գլուխ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎԵՐԱԴԱՄԻՆՈՒՄ և ԿԱՐՄԻՐ  
ԲԱՆԱԿԻՑ

Նա տուն եր գալիս կարմիր Բանակից :  
Են բատրակ տղեն—անունն՝ Ալեքսան :

Գրքերով լեցուն մի պարկ շալակին  
Աւ դոչին կարմիր, աստղածե նշան :

Մի անծայրածիր աշնան յերեկո  
Փովել եր անափ գաշտերի վրա :

Յեկ Ալեքսանի սիրութ թե առած  
Ուզում եր թուչել մաշինի հեքով

Աւ տուն ոլանալ իրենից առաջ :

Նա քանի գնում, մոտենում եր տան,  
Անցնում եր ծանոթ արտերի մոտով,

Լցվում եր ենքան անհուն կարսով,  
Սիրոն անհամբեր զարկում եր ենքան :

Կարմիր Բանակից նա դալիս եր տուն,  
Խորունկ մտքերով վառված են տղեն :

Մրտում յերկու բոց, յերկու վառ յերգում,  
Շուրջը—յերեկոյ մշուշ վլուկեղեն :

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՄԱՐԱՆ  
ՊԱՏՎԵՐ 516  
ՊԵՏՀԱՐԱՆ № 1448  
ԳՐԱԴԵՊԳԼԻՆՎԱՐ 6005 (Բ)  
ՏԵՐԱՎ 3000

БІБЛІОТЕКА  
АКАДЕМІЇ НАУК  
УРСР

418384 КМ



827 6-53

Առաջին յերգումն նա անցյալ տարի  
 Տվեց Լաչինի շինար աղջկան:  
 Ռուշանի կապույտ քարափի քարին,  
 Յերբ հանդում հովիզ ու չթվոր չկար:  
 — Արուս, անիւրավ, չդնաս մարդու,  
 Յես կդամ, հենց վոր տարին լրանա...  
 Ու չերմ խոստումի կրակը սրտում:  
 Սիրահար տղին վերցրին բանակ:  
 Նա յերկրորդ անգամ յերգեց յերեկ:  
 Բանակում հանդես ու միտինգ արին:  
 — Յես խոսք եմ տալիս կյանքս նվիրել  
 Ընկեր Լենինի մեծ դադափարին:  
 Յեվ նրա քարե վեհ արձանի գեմ,  
 Լենինյան կարմիր դրոշի ներքո;  
 Նրանք յերգվեցին կովել, աշխատել  
 Դոլեկտիվ սրտով, կուլեկտիվ ձեռքով...

— Բարե, այս, բարե, ահ հեր,  
 Վերջացրի, յեկա տուն:  
 Վո՞նց եք իրար, չահել, սլահել,  
 Վո՞նց եք ասլում, աշխատում:  
 — Վա՛յ, — վեր թուան հեր ու նանի:  
 Մեկ մեկի փեշ ձիգ տալով:  
 Մեջտեղ առան Ալեքսանին  
 Համբուրելով ու լալով:  
 Մայրը հետո թաղիք փոեց  
 Հողե խոնավ թոնըատան  
 Ու կեղտակուր բարձը դրեց

Աղիկ հյուրի մեջքի տակ:  
 — Այ մարդ, ձեն տուր, զա խնամին,  
 Յես ձվաճեղ, չայ շինեմ:  
 Կտուր յելավ հովաս ամին.  
 — Դուրս յեկ, Լաչին, Լաչին-ե՛յ...  
 Եղիդ, հարեան, լնկեր, ծանոթ  
 Իրար աշխույժ ձեն տվին.  
 Համաքվեցին-բարի գալուստ  
 Զորացրված մեր տղին:  
 Համաքվեցին հետզհետե,  
 Ով կար մոտիկ, սիրելի,  
 Բայց յեկվորի աչքերը թեժ  
 Դուան մեխամած են ելի:  
 Ա՛ի, մեկը կա, նա չի դալիս,  
 Ա՛ի, անիծված հին աղաթ:  
 Նա ել գուցե կարուալի  
 Լաց ելինում հիմա տան:  
 — Բազդի բերեց, չովաս քեռի,  
 — Թելում քիքիր, աչքդ լիս.  
 Տղեդ յեկավ զիրը ձեռին,  
 Արոտ գրչով կցելի:  
 — Եսպես խոսել, բան հասկանալ,  
 Եսքան կարդալ, սովորե՛լ...  
 Զուր չեն ասել կարմիր Բանակ  
 Խորհրդային նոր որենք:  
 Հարցեր տղին հեռվից հեռու,  
 Պատասխանեց նա ձեռաց.  
 — Ի՞նչ կա արգյոք քաղաքներում,  
 Խաղաղություն, պատերա՞զմ...  
 — Վախենում են մեր Բանակից,  
 Զեն կարա դալ մեղ վրա, —

Շողաց աչքում հաղթանակի  
 Հերոսական մի կրակ :  
 — իսկ դռւ , հայրիկ , մինչեւ հիմա  
 Զես ել մտել կոլեկտիվ :  
 Յես գրել եմ քսան նամակ ,  
 Յես գրել եմ , թե՝ մտիր :  
 Եսպես ե ճարն , ես ե ճամբան  
 Դուրս զալու նեղ վիճակից :  
 Եսպես ե մեր իշխանության  
 Գիծն ու կամքը զիտակից :  
 Ի՞նչ ես ասում , ևաչին ամի ,  
 Ի՞նչ եք ասում հեր ու մեր :  
 Կոլեկտիվ ե խալիը հիմի ,  
 Վախտը մերն ե , հերթը մեր :  
 Զեռքը տարան ծոծրակներին  
 Տիրեց խորին լուսություն ,  
 Մեջքո քորեց Հովաս քեռին  
 Ու յետ զարձակ իր վորդուն .  
 — Հաստատ կենա իշխանությունն ,  
 Լավ ես ասում , վորդի ջան .  
 Մեզ համար ե դիմի աշխատում ,  
 Հո չե՞նք լինի զավաճան :  
 Վարկ ել ավալ անցյալ տարի ,  
 Յես ել առի մի աչառ .  
 Դուր ել յեկար , դարձ բարի ,  
 Դու ել , կարաս , մի հաս ա՛ռ :  
 Եղուց ելոր զարնան վարին  
 Զութ կլծեմ սեփական :  
 Դու ուրիշ մարդ , կարաս , ճարի ,  
 Յես — չքավոր , յես հա կամ :  
 Մանկությունից հոտաղ , մշակ ,

Տկլոր , անտուն ու անտեր .  
 Իշխանության արևը չատ ,  
 Ինձ դարձրեց յեղան տեր :  
 Վո՞նց եմ շահել , վո՞նց եմ պահել  
 Քորփա ջահել եղ դանեն .  
 Իսկ դռւ եսոր վեր ես կալե ,  
 Թու կոլեկտիվ կտանեմ :  
 Թույլ տուր , վորդի պարզաբանեմ ,  
 Համաձայն չեմ եղ բանին .  
 Յես չլծած յեզս տանեմ ,  
 Խալիը քչի սպանի՞ ...  
 Թույլ տուր , ախր , ինքս լծեմ ,  
 Մուրազս առնեմ մի տարի ,  
 Հետո ինքս ել չեմ լինի զեմ ,  
 Առ տար ու տուր ոտարին :  
 Վերջացրեց Հովաս քեռին՝  
 Մեջքը կրկին քորելով ,  
 Հետո նայեց ներկաներին .  
 Տարակուսած ու մոլոր :  
 — Ի՞նչ եք ասում հարեաններ ,  
 Ի՞նչ ես ասում , ա ևաչին ...  
 ևաչինը լուռ գլուխն առել ,  
 Կախ ե արել առաջին :  
 Խոսքը կալավ թելում Բաջին ,  
 Քիթը սրբեց զոդնոցով :  
 Ու աչքերում չողչողացին  
 Յերկու կաթիլ , յերկու ծով :  
 — Ալեքսանդր ազիզ խաթել  
 Դեմ մի դնա , այ Հովաս .  
 Խալիսի զբան չատ ես զատել  
 Ու մնացել հա սոված :

Կղամ վորդի , խի՞ չեմ զալի .  
 Ինչս պիտի կորցնեմ .  
 Հարստությո՞ւն , վոչխա՞ր , խալի՞ ,  
 Բարեքով լի նոր տնե՞ր ...  
 Խի՞ չեմ ուզում մարդավարի  
 Ապրեմ , մաքրեմ ու հաղնեմ ,  
 Քաղաք գնամ ամեն տարի ,  
 Չուզողները տրաքվեն :  
 Յես ել մեր եմ , վորդու տեր եմ  
 Մուրագ ունեմ իմ սրտում .  
 Ասի թառլան հարս բերեմ ,  
 Տղիս անեմ տեղ ու տուն :  
 Հարս բերեմ հարսանիքով ,  
 Փառք ու պատիվ տեղ լինի :  
 Ծաղով , ծախսով , թաղարիքով ,  
 Շաղ տամ արադ ու դինի ...  
 Համ ասում ե , համ չողոքորի  
 Աչքով անում լաշինին .  
 Լաշինը լուռ միտք ե անում ,  
 Զի իմանում ինչ անի :  
 -- Զե , այս ջան , եղ կներես ,--  
 Ասավ վորդին կարմրած ,  
 Շողչողացին աչք ու յերես ,  
 Մերը սրտում թրթուց .  
 -- Մուտ ե , նոնի , խելքից հանի ,  
 Հին սովորույթ , հին կենցաղ .  
 Ինչի՞ս ե պետք մեծ հարսանիք ,  
 Արալ , գինի , ծախս ու ծաղ :  
 Մեր ունենամ լի ծիծաղով .  
 Մերն ե արադ ու դինի .  
 Մերը չեղավ , ծախսով ծաղով

Ուրախություն չի լինի :  
 Քեֆ չեմ անի՝ ջերս զատարկ ,  
 Վեր չեմ անի յեղ ու կով :  
 Յարիս կառնեմ , կովսող կերթամ  
 Կարմիր , կարմիր պսակով :  
 Կովեկտիվում կապրենք սիրով  
 Ու կաշխատենք միասին :  
 Սուտ ե , այս , կուլակի խոսք ,  
 Ծաղով պսակ մի ասի :  
 Մարդ ու կնիկ տարակուսած  
 Մտիկ արին խնամուն ,  
 Խնամացուն ծանր հազար  
 Ու ասավ .— Զեմ իմանում :  
 Հավանել եմ Ալեքսանին ,  
 Խելոք , հալալ կաթնակեր . . .  
 Կովսանենք մի յերկու ամիս ,  
 Մինչեւ մի քիչ մտածեմ :  
 Ու վեր կացավ ծմբաւլով ,  
 Լայն ու յերկար հորանջեց ,  
 Սովերն անցավ պատի վրայով  
 Հսկայական ամպի պիս :  
 Ու վեր կացան ընկերները ,  
 Ալեքսանին սիրու տալով .  
 — Երանք — իրենց , մենք ել մերը ,  
 Ճեսնենք ո՞վ ե հաղթելու :

ՅԵՐԱԲՈՐԴԻ ԳԼՈՒԽ

ԳՅՈՒՂԱՌՀՐԴԻ ՆԱԽԾԳԱՀ ՍՈՂՈՆ

Նորից աշուն : Անձրե : Քամի :  
Զանգուն իր հին ճառն և ասում :  
— Ժողով և, հեր, լաշին ամի՞՝  
Զայն և տալիս կատարածուն :  
Ու աներում, ժողովներում,  
Փողոցներում, պատերի տակ  
Գյուղի կյանքն և հուղվում յեռում  
Ու չուռ դալիս հիմնահատակ :

Բողոքում և ընկեր Սողոն-  
Նախագահը դյուղխորհրդի :  
— Եսպիսի տեմպ, եսքան ժողով,  
Հրահանգներ եսքան խրթին...  
Հուպ են տալիս վերից, վարից,  
Իշխանություն ու ժողովուրդ,  
Արի, Սոզո, կառավարի,  
Բւղիդ զիծ տար ես ժողովում :  
Վոչ քուն ունես և վոչ հանդիսա,  
Վոչ ել կարդին աշխատավարձ .  
Զեռ ես քաշել տանից, կյանքից,  
Աշխատում ես մերկ ու սոված :

Գոնե տեսնեն, զնահատեն,  
Ու խոհարհվեն քո առաջին :—  
Ու մի սե ամոց զեմքը պատեց .  
— Ախ, լաշինի մարալ աղջիկ,  
Ախ զու սիրուն, զու լիրք Արուս,  
Ես ի՞նչ արիք, զու ինձ վառիք .  
Հերդ ասավ յերկու տարուց,  
Դու Թուշաննց տղի՞ն առիք ...  
Յեկ յես լինեմ Զաթնաց Սողոն,  
Եսքան տարվա կուսակցական  
Ու ես գեղի մասշտաբով  
Համ քարտուղար, համ նախագահ, —  
Դու ինձ մերժե՞ս, խայտառակե՞ս ...  
Խոսք տաս քոսոտ Ալեքսանի՞ն ...  
Տո, անամուս, յես առա՞ քեզ,  
Դու իմ թա՞յն ես, իմ արժանի՞ն ...  
Լավ, սպասիք, որիորդ Արուս,  
Զոփուր լաշին, լիրք զավաճան :  
Միտք և անում ընկեր Սողոն՝  
Դեռ չհասած ժողովատան :

Զափաղանց բարդ, աղմկալի  
Հարց և գրված եղ ժողովում :  
Սողոն հուղված զանդ և տալիս,  
Սաստում, զոսում ու վրդովվում :  
— Այ քեզ բջիջ, այ քեզ ժողով,  
Սուս արա ե՞, ընկեր Վարդան :  
Յերբ լոեցին, ընկեր Սողոն  
Շարունակից թուղթը կարդալ .  
«Յեղոյան լաշին, ունեոր միջուկ,

Բատրակ և պահել, կիսու ցանք արել:  
 Գյուղաբնուրգն ունի եսպես առաջարել,  
 Բնկեր լաշինին կուլակ համարել,  
 Գանձել նրանից հարյուր փութ ցորեն,  
 Վորպես պարտադիր հացամթելում,  
 Նրան միջակի ցուցակից հանել  
 Աւ հարցը զնել ձայնազրկելու»:  
 — Եղ չատ գնացիր, ընկեր նախագահ, —  
 Բողոքեց տեղից մի կոմսոմոլիստ:  
 — Լաշինը լավն ե, արես վկա,  
 Եզ խզի դեմ ե ու սխալ ե խիստ:  
 Բայց ընկեր Սովոն հուսալ ավեց նրան  
 Դասակարգային «անարատ գծով»,  
 Անվանեց «հակա», կուլակի բերան  
 Աւ կոմսոմոլի անունը քցող:  
 — Այդ չի կարելի, սխալ ե, Սովո, —  
 Գոռաց Գարսեանն՝ արդեն գաղաղած: —  
 Գու դեն ես հրում լաշինին զուռով,  
 Զե՞ վոր նա մերն ե, միջակ, հարազատ:  
 Վորպես կոլխոզի հմուտ նախագահ՝  
 Գարսեանն ուներ վճռական կշիռ.  
 Բայց Սովոն, Սովոն թասիրի յեկալ,  
 Վորոշեց համառ իր եշը քշի:  
 Իրրի ապացույց, անհերքելի փաստ  
 Իր կուսակցական ստաժը բերեց.  
 Հասկոնո՞ւմ ես գու, ընկեր Գարսեան,  
 Դեռ խամ ես, ձվից նոր յելած յերեկ:  
 Յեվ կուսակցական սույժ ել ստացար,  
 Ուրեմն յերկար մի փաստաբանի:  
 Իսկ Սովոն, Սովոն կուսպումն անցավ  
 Սպիտակ, մաքուր վորպես աղավնի:

Ժողովում կային յերեք կոմունիստ.  
 (Գար) Սևանն, Աղասին ու ինքը — Սովոն:  
 Սակայն Աղասին ձեռնպահ եր միշտ  
 իր «կուսակցական» աղաթին սովոր:  
 Մասնակցում էյին ժողովին նաև  
 Յերկու թեկնածու, տաս կոմսոմոլիստ:  
 Նրանց ել, սակայն, Սովոն հմայեց  
 «Դասակարգային գծի» անունից:  
 Ո՞վ գասակարգին ընդդեմ կդնար,  
 Նրանք մեծ մասամբ չեղոք մնացին  
 Քվեարկելիս (ի՞նչ խելոք հնար . . .)  
 Աւ Սովոն հասավ սրտի մուրագին:  
 Քվեարկեցին միայն չինք հոգի.  
 Յերեք կողմնակից, յերկուս՝ հակառակ:  
 Եսպես մեկ մատով հարցը վճռեցին,  
 Դրին գյուղիսորհաւրդ՝ ժողովի առաջ:

— Տո չեմ կարա ե՞ , այ հոգուդ մատաղ,  
 Գոռաց հուսահատ լաշինը տեղից: —  
 Հորյուր փութ ցորեն յես վո՞ր տեղից տամ:  
 Այսը իի՞ եք ինձ ճնշում անսեղի:  
 Յես ի՞նչ եմ խոսել իշխանության դեմ,  
 Վոր զրկում եք ինձ ձայնից, խոսալուց:  
 Ես իշխանության չնորհիվ չե՞ր,  
 Վոր յես ձեռք բերի յեղներ յերկու լուծ:  
 Ալեքսանն ուղեց յելնի պաշտպանի,  
 Բայց հազար, կարմրեց ու վեր չկացալ:  
 Տիրությամբ նայեց ընկեր Սևանին  
 Աւ լուռ կուլ տվեց բարկություն ու ցալ:  
 «Վոչ, չի պաշտպանի նա իր աներոջ,

Թող արդարությունն ինք--մասսան ասի»:  
 Ու ձզձվում եր հարցը ժամերով,  
 Ասսում եր Սոլոն քեռի Հովասին:  
 -- Տո թույլ տուր, թույլ տուր յես  
     ոլարզաբանեմ,--  
 Յեռում է Հովասն ու չի դադարում:--  
 Ախր յես կըս մոտ հարեանն եմ,  
 Հովիկ ենք յեզել մեկտեղ մի տարում...:  
 + Տո թույլ տուր, թույլ տուր...--  
     ու ժողովն ելի  
 Հովզվեց, աղմկեց Լաշինի համար:  
 Բայց Սոլոն մնաց պինդ, անդրզվելի.  
 Յել շարունակեց իր գիծը համառ:

Յուրս յեկավ Լաշինն ել որ ժողովից  
 Զարդված ջղերով, հուղված, գաղաղած.  
 «Դե այսուհետեւ, Լաշին, հոլովվիր—  
 «Կուլակ... ձայնազուրկ... ու անհարազատ»:  
 Դե գնա, Լաշին, յեզներդ ծախի,  
 Ցանքսդ կրծատի, լոգըություն արա,  
 Աշխատածդ տուր զինու, արադի,  
 Հարբիր, վեր ընկիր ճամբեքի վրա...  
 Ա՛յ, են ժամանակ կլես չքավոր,  
 Մոտիկ, հարազատ Զաթնանց Սոլոյին:  
 Թե չե բանելուց ի՞նչ ոգուտ կա վոր...  
 Եսպես ել կըսա՞կ... եսպես ել ոյի՞ն...  
 Ա՛յ ոճ անորեն, յես ի՞նչ եմ արել.  
 Աղջիկ ևը՝ չուղեց, աչք ել —չժամավ,  
 Դուք եք եղալիսի որենք հնարել,  
 Յես կարող եյի զոսով աղջիկ տալ...»:

Ու Լաշինն աշեան պղտոր ամպի պես  
 Ներս մտավ Զաթնանց Սանթրոսի հովան:  
 + Այ հաղար բարո՞վ... արի', արի դես,

Հենց նստիր, վոնց վոր կնսուես քո տան...  
 Ես վո՞նց պատահեց, մանահեր լաշին...  
 Բաս «միջա՞կ» եմիր, նրանց «հարադատ»,  
 Հարյուր փութ ցորե՞ն... Դե հորդ բացիր,  
 Չոյլովուրիկ լաշին... հա՛, հա՛ հա՛... — հաղաց:  
 Իսկ «հընկեր» փեսադ ինչու տագ արավ,  
 Քեզ չե՞ր ճանաչում, թե՞ր լեզու չուներ:  
 Թողնես ճառ ասի յերկար ու բարակ.  
 «Կոմխող, հա կոմխող, աներ, հեր ու մեր...»:  
 Եր ինչ դարդ սռնես, անահեր լաշին,  
 «Հընկեր» փեսադ քեզ կոմխող կտանի.  
 Ու եդ յերջանիկ կոմխողի միջին  
 Կապրեք վոնց մի տուն ու մի ընտանիք...  
 Հարյուր մետրանոց յորդանի տակին...  
 Հա՛. հա՛. հա՛... հի՛-հի՛... իստակ թամաշա...  
 Կպարկեցնեն տղամարդ ու կին...  
 Եւ նամուսն ել հո չհալա՞վ-մաշավ...  
 Ես գիշեր գու իմ կնկա մոտ քնես,  
 Վաղ՝ յս քո կնկա, մյուս որ՝ ուրիշին.  
 Մի գիշերում տաս անդամ փոխս կընկնես,  
 Բաս... գիշեր, կոմխող... արի ու հիշի...  
 Ել ի՞նչ իմ, ի՞նչ քոնց սեփականություն,  
 Ինչքան վոր կարսա, զոռ տու վաստակի,  
 Յերեխաներին կժողվեն մի տուն-  
 «Մանկական մսուր»... և կամ ուղղակի  
 Կուղարկեն Մոսկով ու... Ամերիկա,  
 Վոր Ամերիկան սրանց ճանաչի.  
 Համ ել հին պարտքեր ունեն, պտի տան...  
 Հա՛. հա՛. հա՛... ասա, խոսիր ե՞ր, լաշին:  
 Լաշինն ամպամած գիշերվա նման  
 Կծկվել ե լուռ բուխարիկի մոտ.

Շարունակում ե Սանթրոսը համառ  
 Հյուսեն նրա չուրջ իր ցանցը թունոտ:  
 Յե՞րբ կպսակեք, սանահեր լաշին...  
 Ասում են փեսադ պսակ չի ուզում:  
 Վորոշել ե գա, աղջկադ կանչի,  
 Ռէ ձեռից բոնած քաշ տա տանի տուն:  
 Այ լավ հարսանիք... իսկական պատիվ...  
 Պատվագոր փեսա, պատվալոր աներ...  
 Ո՞վ եր եդ գուել քորիիդ ճակատին,  
 Եղպիսի որինք ո՞վ ե սահմանել:  
 Ո՞վ, Սանթրոս աղա, սիրտս մի դազի, —  
 Մոլոց լաշին անհույս տրտմությամբ:  
 Ու լուց: Հետո գոսաց կատաղի.  
 Յես աղջիկ չունեմ, վոր չներին տամ:

Ծ 6 2 8

Գիշեր եր: Լցվեց Սանթրոսի հոգան  
 Իր ամենորյա հաճախորդներով:  
 Սկսեց գրույց, վեճ սովորական  
 Միշտ նույն հարցերի շուրջը դեքեռող:  
 Նույն են սարերը՝ հսկա ու հերոս,  
 Ժայռ ու ապառաժ կախված են ողում,  
 Յեվ անդնդախոր մթին ձորերով  
 Նույն Զանգուն ե հին յերգը վորոտում:  
 Նույն խրձիթներն են ցըիլ մակաղել,  
 Զորում, ծերպերում, քարափի ծերին,  
 Ահա մի մատու վորպես նետ աղեղ,  
 Մեռած զորություն մեռած սրբերի:  
 Բերդը կիսաքանդ «Աչոտ յերկաթի»,  
 Մի վանք՝ կառուցված յոթերորդ դարում,  
 Յեվ քանդակագրու քարեր բազմաթիւ:



Յեվ ընդհատակյա անցքեր գալարում։  
 Նույն գիշերն ե մութ և համատարած  
 Անտառում, ձորում, պատի ճեղքերում,  
 Գաղի լամպերի լույսն ե անձարակ  
 Այդ ամենակուլ խավարը քերում . . . —  
 Բայց աթարածուխ բուխարիկի մոտ,  
 Են հին «Հայրենի ոջախի առաջ»  
 Նախկին որերի մանուկ հուզումով  
 Հիմա չեն պատմում յերկար ու բարակ  
 Հոպիտ չարքերի և արնածարավ  
 Վիշապի մասին յերեքըլխանի։  
 Այդ բոլորն ավեց, սարերից տարավ  
 Մի աշխարհացունց յերկաթե քամի։  
 Եւ չարք ու հերքյաթ չկա սարերում  
 Ու վոչ եւ խավար մսուրում կովի։  
 Յեվ հիմա այնուեղ եւ չի վախենում,  
 Չի խելագարվում և վոչ մի հովի։  
 Զե՞ վոր մտերիմ աչքերի նման  
 Հեռվից կայծկլուում ու սիրտ են տալիս  
 Եւկարական լույսերը նրան  
 Յեվ Քանաքեռից և Յերեվանից։  
 Զե՞ վոր նա գիտե խանդալառ սրտով,  
 Թւրթում, կապելով, կարդացել ե նա,  
 Վոր եղ լույս-աչքերն անվրեալ հերթով  
 Նրա անտառին եւ կմուտենան։  
 Կելնեն Փշշալով Քանաքեռեսից,  
 Հետո Սոլակից, Հաղթական, անդարձ,  
 Կելնեն և խավար գիշերվա կեսին

Հեղեղի նման կմտնեն անտառ։  
 Կվառվեն անհաս են ժայռի ծերին,  
 Աղնիվ մարմարի հարսւստ հանքերում,  
 Գայլ չի գիպչի եւ չար եծերին,  
 Ինչքան եւ նրանք արածեն հեռուն . . .  
 Գիտե նա, վոր տեմպ ու թափ կը բրեն  
 Եղ լույսերն իրա հայրենի դյուզին  
 Ու վաղ այստեղից զիշեր ու ցերեկ  
 Ճշալով կանցնի նա—յերկաթուզին։  
 Եւ չարք ու հերքյաթ չկա սարերում  
 Յեվ աթարածուխ բուխարու առաջ  
 Բւրիշ հարցերի շուշը են պտավում  
 Մաքերը նոր թափ ու նոր թե առած։  
 Հարցեր, այսորվա և ապագայի,  
 Չոր, հարվածային, յերկաթե հարցեր,  
 Հարցեր, վոր յերեկ, մյուս որ չկային  
 Այսոր մոքերի հեսան են դարձել։  
  
 Լցվում ե հողան ծխով, աղմուկով  
 Ու նավթի լսմպի մշուշով գեղին։  
 Կոլլեկտիվ մտած սանահեր՝ Մուքոն  
 Համոզում ե գեռ Քավոր Մուշեղին,  
 Վոր սա իր եցի ընթացքը չեղի,  
 Մանի կոլլեկտիվ, մեկտեղ աշխատեն,  
 Արինակ զառնա բովանդակ գեղին  
 Իր համարիմ սանահոր . . . խաթեր։  
 Մուշեղը փափկում, կակզում ե կարծես,  
 — Զղբվե՞նք, լաչին, հա՞ . . . տիտեր Հովաս . . .

Լաչինը գլուխը ձեռներին բարձել՝  
Թեռ միտք ե ահում լուս ու վրդովված :  
Բւ խոպոսում են ձայները քիչ-քիչ  
Հոդի դարշահոտ, դաղջ մթնոլորտում,  
Իս զրում, ձորում գեան իր անհանդիսոտ,  
Իր հավերժական ճառն ե վորոտում :

ԶՈՐՅՈՐԴ ԳԼՈՒԽ

ԶՐԵՄՆԻ ՊՂՏՈՐՎՈՒՄ ԵՆ

Դինամիտը անտառում առավոտյան վորոտաց .  
Խնձորենին ցնցվեց, տանձիները գողացին .  
Տանձենու տակ թափառող արջը փախավ չորեքթաթ,  
«Ել ահ չկա»—մոլտաց փայտ հավաքող գյուղացին :  
Վեր խոյացան մարմարի, լույսի կարծր կտորներ,  
Ողում թափով պարեցին ու շաղ յեկան չորս բուռ,  
Արձարանքը գղրդաց ու սլացավ սարն իվեր՝  
Նառերի մեջ ինդուստրիկ իր արշավը յերգելով :  
Արձագանքը գղրդաց ու սլացավ սարեսար),  
Հասավ խոժոռ ձորերին, քարափներին հոռետես .  
Ու մոտակա գյուղերին վորպես խրոխտ մի բառըս՝  
Մի նոր կյանքի մարմարե արևետագ ավետեց :  
Յեկ գյուղացիք, վոր անգործ պատերի տակ պարզած,  
Քաշում ելին զույլասար ու ծուլաբար հորանջում,  
Վոտքի յելան վնչալով՝ թողած հորանջը կիսատ  
Ու գեպ անտառ նայեցին արտասովոր յեռանդով :  
Ճե՛յ, Լեռշինարդին ե ասին ու զնացին բանելու,  
Սակավարյուն գյուղելում բարախեց նոր մի յերակ,  
Կալ ու կուտից վերջացած՝ վերցրին լոմ ու քլունգ,  
Ամբարված ույժը գտավ նոր հուն, նոր յելք ու յեռաց :  
Յեկ նրանք, վոր փախել զատ, սպահվել ելին փոսերում ,

Դուրս վազեցին՝ դիրքերից գրոհ տվող զորքի պես,  
 Աշխատանքը հոնդաց ու հանքերից թիւ հեռու  
 Մոտիկ ձորում զրնաց աղջիկների մերդը թւյ :  
 Սերն ենքանց յերգերում ու շողշողուն ավագան,  
 Սերը ջահել բանվորի, վոր աշխատում և հանքում,  
 Յերգում են են սիրահար կոլխոզավոր աղջկան  
 Ու յերգելով վայրի տանձ ու խնձոր են հավաքում :  
 Խանդավառից Ալեքսանն ու քլունդը վերցրեց,  
 Պոկեց տեղից մարմարի հսկայական մի կոոր,  
 Հսկայի պես հեալով սելերի մոտ հասցրեց,  
 Հետո սրբեց լին ճակատն ու յերեսը քրանաթոր :  
 Լաշինն ել եր իր սելով յեկել մարմար կրելու :  
 Ալեքսանը բարեեց, բայց բարեը նա չառավ :  
 Ոտարի պես եր նայում մոայլ թախիծն աչքերում :  
 Նա յերեսը շուռ տվեց Ալեքսանին հակառակ :  
 Ալեքսանը գունատվեց: Բայց շխոսեց: Հեռացավ:  
 Նստեց հեռու ծառի տակ ու մտքելում շվաբեց :  
 Սրտում կասկածն աշավոր ոչի նման ծառացավ  
 Ու մի սե սմազ ծրաբեց անտառ յերկինք ու արե :  
 Ժամանակն անց ե կենում դինոմիտի վորոտով,  
 Նա չի տեսնում Արուսին, չի յերեսում, չի զալիս :  
 Տուն ե դառնում ամեն որ լիոնակուտակ կարուով,  
 Բայց նա չկա հայաթում... էերն ել բարե չի առիս :

Մեկն անտառում ծիծաղեց... ո՞ւ ժ՞ու եր արդյոք ձեն  
 տվին...  
 Նա՞ եր արդյոք, թե քամին... ձեկը կանչեց—  
 «Ալեքսան»:  
 Անձրի մաղլեց հրեղեն վեր սիրահար են տղին

Յեկ նա տեղից թուչելով դեպի ներքի սլացավ :  
 Քրքչացին աղջիկներն ու շաղ յեկան ծերպերում ,  
 Տանձենու մութ ստվերում սպանում եր միայն նա ,  
 Ալեքսանին եր նայում վորակես յերկչում յեղջերու ,  
 Վոր կովի յե պատրաստվել վորսորդի հետ—միայնակ .

—Հերդ հսոր բարե չառավ ,  
 Սիրսո չարն ե գուշակում :  
 Արուն, Արուս , ձամփիս վրա  
 Փորած վոս կա մի թաքոն :  
 Նոր փեսա յե ճարել հերըդ  
 Սի թաղցին, մի խափի :  
 Մոռացել ես յերգումներդ  
 Դու Ռուշնի քարափի :  
 Իսկ յես հոպես հավատարիմ  
 Յերգումի ու սիրս տեր ,  
 Սիրել եմ քեզ յերկու տարի ,  
 Անքան , անհուն կարստել :  
 Քեզ եմ հիշել ամեն զիշեր  
 Պահակության ժամելիին .  
 Հրամատարն ինձ չի տեսել  
 Պոստի վրա քնելիս :  
 Են քո սերն եր ինձ թե , տալիս ,  
 Հեռվից խոսում , հորդորում .  
 Զեյթ քնում կորհրդային  
 Հայրենիքի զիրքերում :  
 Արուս , լսիր Ալեքսանիդ ,  
 Հորդ սոլուկ մի մնա .  
 Կուլակի տան հարս մի լինի ,

Հին կենցաղով մի գնա :  
Կոլեկտիվում կառլրենք սիրով  
Ու կաշխատենք միասին ,  
Արի մեր նոր ճանապարհով ,  
Նոր ախարհին միայիր :  
Լաց մի լինի եղանա խելառ ,  
Եղակն անմիտ ու անկամ ,  
Թույլ տուր դրկեմ մեջքու դաւար ,  
Թող համբուրեմ մի անդամ . . .

—Թող , հերիք ե մի անի ,  
Աղջիկները ձոր մտան . . .  
Մեզ նայում են մի յանից . . .  
Տես կդուռամ , ձեն կտամ :  
Թող ինձ , գնա քո բանին ,  
Ինձ կոլեկտիվ մի տանի ,  
Հերն ու մերս չեն ուզում ,  
Յես անկիրթ եմ , անուսում :  
Ինչ եմ անում կոլլուզում . . .  
Հազար ըերան ու լեզու ,  
Հազար մարզու ձեռքերին ,  
Հազար մարզու լուս գերին . . .  
Յես սիրում եմ միայն քեզ ,  
Յեթէ սերս կհարցես ,  
Ինձ կոլեկտիվ մի տանի ,  
Ռւրիշի կին մի անի :  
Դու ինձ անկեղծ չես սիրում ,  
Ել ինչո՞ւ յես չաշբում :  
Թող չեմ ուզում , կտեսնեն ,  
Այրվում են յերեսներս . . .

—Յեթէ աղջիկ ևս ուզում , կոլեկտիվ մի տանի .  
Յեթէ զնում ես , զնա , աղջիկ չունեմ տալու . . .  
Պատասխանեց վերջնական Լաշինն Ալեքսանին ,  
Թախտի վրա ծալապատիկ՝ ձանր ծմբալով :

Ալեքսանը վեր կացավ ու առն զնաց տրտում :  
Կրկին հորը համոզեց .  
—Ի՞նչ ես ասում , ա հեր ,  
Գեթ դու արի , մի լքի քո մինուճար վորդուն . . .  
Հովասն ելի իր նախկին պատասխանն եր պահել .  
—Ես մի տարի թող մնա , են աշառս լծեմ ,  
Են վերի հանդը վարեմ իմ սեփական չթով ,  
Հարսանիքիդ ել մի փարչ անուշ արազ դցեմ ,  
Ես խարաբեն ել քանդեմ , շինեմ յերկու կտոր ,  
Նոր գալ տարի կրվենք ամբողջ տնով տեղով :  
Կոլեկտիվն ել կտեսնենք վոնց ե իսկականո՞ւմ . . .  
Խալիը մտիկ ե տալիս , տասանվում ե Սոզոն ,  
Սիր ջրին չհասած յես ո՞ւր եմ մերկանում :

Հուսահատվեց Ալեքսանն ու դուրս յելավ տանից :  
Նա հանդիպեց փողոցում ընկեր Գարսեանին :  
Գարսեանի հանդեպ նա հարզանք ուներ շատ մեծ  
Ու պատմությունն նրան մանրամասն պատմեց ,

—Հերս ինձ հետ չի դալիս,  
 Սևան, յես ի՞նչ անեմ.  
 Արուսին ել չեն տալիս,  
 Յեթե կոլսող տանեմ:  
 Յես բանակից յեկա տուն  
 Վոնց կարգած յերկաթ,  
 Յես բանակից հաստատուն  
 Վորոշումով յեկա:  
 Բայց տատնվում եմ հիմի,  
 Դրությունս անել—  
 Յես մի դալար ուռենի,  
 Սևան, յես ինչ անեմ:  
 Հորս մոտից մեծ սիրով  
 Կրաժանվեմ, կդամ,  
 Բայց չեմ կարող, չեմ կարող  
 Թողնել եղ աղջկան:  
 Խոսք են ավել Բեյթութին,  
 Եգուց կնշանեն.  
 Նա կմարսի, նա կուտի,  
 Սևան յես ի՞նչ անեմ:  
 Տասնեխն թիվը լիներ,  
 Կսանեյի նըան:  
 Պսակի որ: Ժամի մեջ:  
 Կամ թե ժամի դրան:  
 Բայց մոլորվել եմ հիմա,  
 Անողնական, անել,  
 Յես ուր դնամ, ուր մնամ,  
 Ախար յես ի՞նչ անեմ:  
 —Յես այդ վաղոց գիտեյի, մի լհատի, Ալեք  
 Արի քեզ հետ միասին քո եղ ցավը ծալենք:

Հերոսություն չի լինի, յեթե խվես նըան,  
 «Պսակի որ, ժամի մեջ, կամ թե ժամի դրան»:  
 Նա՛ յե հերոսն իսկական, ով վոր չի կարկամի  
 Դասակարգի՛ թշնամուն հարվածելու ժամին:  
 Ով իր վիշտը կուլ տալով կպայքարի համար  
 Վոչ միայն իր, այլ ամբողջ դասակարգի համար:  
 Թող Լաչինի աղջկան, մենակ արի կոլսով,  
 Անհաջող սկըն անցել ե մեր բոլորիս գլխով:  
 Ուրիշ աղջիկ կսիրես, կմոռանաս նըան,  
 Կծիծաղես դու քո թշնամու վրա:  
 Դու անցել ես բանակից, դու մերվել ես մերոնց  
 Դու պարտավոր ես դառնալ առաջավոր հերոս:

ԿՈԼԽՈԶԱԿԱՆ ՅԵՐԿՈՒՆՔԻ ԱՂԱՂԱԿԱԲ

Հետզետե բարձրացավ, հետզետե աճեց  
Կոլխոզական յերկունքի աղաղակը գյուղում.  
Քաղաքն իր յերկաթեղեն բազուկները պարզեց,  
Ու խանդավառ ոգնության հասավ ընկերուհուն:  
Քաղաքներից անհամար բրիգադներ յեկան:  
Նրանք յեկան կենակոմից, որդարանից, հանքից:  
Նրանք բերին իրենց հետ յերկաթի խոսք, յերկաթի  
Ու ձեռ զարկին վիթխարի բեկման աշխատանքին:  
Նրանք յեկան, յերկաթի մի անընդհատ հոսանք  
Քաղաքներից շարժեցին գետի գյուղերը բոլոր.  
Սերմալուիչ մեքենան մինչեւ թղթ հասալ,  
Տրակտորները անցան՝ ձամփեքը նախշելով:  
Ու կուտակված, լեռնացած հարվածային վաղով  
Նրանք գյուղերը մտան, մտան զոմ ու խրձիթ,  
Ուր կապված եր մի աչառ, վորոճում եր մի կով  
Ու զոմերը չեր տաքանում նրա նիշար չնչից:  
Յեկ նրանց կոչը վառման, նրանց կոչը մի նոր,  
Ելեքտրական, լուսավոր, բարձր կյանքի մասին—  
Ընդունում եր գյուղացին սիրով, տառանուով:  
Ու անձնատուր եր լինում պայծառ եղ յերազին:  
Այն, ինչ կաթիլ առ կաթիլ սրսկված եր գյուղին,

Կուտակվել եր աննկուն, անդուլ աշխատանքով,  
Այսոր բացել եր իր լայն, գալարավոր ուղին  
Ու հուժկու մի շարժում եր դառել գյուղի կյանքում:  
Շարժումն աճեց, վարարեց ու գյուղից գյուղ անցալ  
Վորովես անդարձ մի ալիք, գարնանային հեղեղ,  
Արմատախիլ զնցվեց մի զարավոր անտառ,  
Հաղարամյա կյանքն իր հին ընթացքը չկղեց:

Յեկ սկսեց անընդհատ: Ժողով: Ժողով: Ժողով:  
Միտինդ: Զուռնա: Նազարա: Միտինդ: Ճառ: Յերպ  
Պարեր:

Յուբաքանչյուր խրձիթում յուբաքանչյուր Պողոս  
Ինտանեկան խանդավառ տրիբուն եր դառել:  
Յեկ նադաբրով ու զուռնով, յերգով ու ծիծաղով  
Մրցականչի զնացին գյուղերն իրար վրա:  
Չենքը զարկեց սկզանին մինչեւ անդամ Մողոն:  
Ու վորոշեց մինչեւ լույս զառնալ համատարած:  
Գյուղխորչրդի ժողովում հաստատ նա յերգեց,  
Վոր մինչեւ լույս Քարաշամբ Քյուղը հեղացքին  
Յեկ սաեղծի այսպիսի տոկոսային թվեր,  
Վոր զրնդա չքջանի ու զավառի միջին:  
Յեկ բոլորն ել ինքնազոհ նժույղների նման  
Պատրաստ եյին սլանակ քրսնակալած, անդուլ:  
Դրա համար անցնելով հաճախ չափ ու սահման  
Դիպում եյին քարերին ճանադարչը քանդում:  
Իսկ ճանապարհի վրա զարարվում և թշնամին,  
Թույն և թափում կատաղի և ուժերը լարում:  
Փըչում և բամբառանքի աղերասան քամին  
Քարաշամբից մինչեւ զոռմ և ամբողջ աշխարհում...

Պրովակացիան—մի անտես, մի անմարմին սողուն,  
վոր խայթում ե, պղտորում, թունավորում արագ:  
Վարակվում ե մինչև խսկ ինքը, ընկեր Սողոն  
Ու հաճախ միտք ե անում մոլոր ու անձարակ:  
Սակայն վորակես նախագահ «Հին» կուսակցական՝  
Անհարմար ե համարում Գարսիանին զիմել:  
Ու դիմում ե . . . Սանթրոսին (ի՞նչ անենք, վոր հակա)՝  
«Մեզա կուսակցության» կրկնելով իր մտքի մեջ:

—Եղ մեր մեջ ել կմնար, արխային կաց, Սողուն:  
Ել վո՞ր որվա ազգական, վոր քեզանից պահեմ . . .  
Մնացել ե մի շարաթ . . . ինչ կոլեկտիվ . . . ժողով . . .  
Անդիացին ե զալու . . . կազմենք մարդավայել:  
Զի յես ուզում ամեն որ, վոր «Հընկերը» հեծնի:  
Բաս վոր առավ ու վախա՞վ . . . ել վո՞րանեղից ձարեմ . . .  
Նա իմ վոտով—վախչելու պատրաստություն տեսնի՞ . . .  
Այ՛ ցորեն են հավաքում քաղաքում ամբարեն:  
Յեկեղեցին վերկալա՞ն . . . եղ վո՞նց եր՝ յետ տովին,  
Թէ՞ Ոիկովն եր Մոսկովից եղակես հեռազրել:  
Ախար սրանց վախե-վախին ընկել ե ենտեղից,  
Ստալինին ել արդեն վաղուց բանտ են դրել:  
Ինքու սկի մի վախի, տեղեւ հանգիստ մնա,  
Յեկողները մերոնք չե՞ն . . . կասեմ կոմիտեյին.  
Դու մեզ ինչ ես արե՞լ վոր . . . այ՛, մեղ վատել ե նա,  
Են Սեանը Մանասի, թէ մասային, թէ ինձ:  
Են Ռուշանի քարափիս աչք են տնկել գրանք,  
Ատամեները սրել են, աքսորել են ուզում:  
Պապենական մուլք ե դա, կյանք յեմ դրել վրան.  
Աբցունքով եմ ձեռք բերել . . . ներողությո՞ւն:

Ախար ջան եմ մաշել ե՞ : Այ ձեռներիս մտիկ:  
Յես իմ դրան բատրակից պակա՞ս եմ աշխատել:  
Ունեցածից տվել եմ խեղճին, ժողովրնդին  
Ու որումս չեմ դիպել մեծավորի խաթեր:  
Յես աշխատեմ, յես դատեմ, հաշտություն գիղեմ,  
Տամ անամոթ ծույլերի՞ն, հարթեցողնե՞րին:  
Մի տունը լիք ընտանիք, կարիք ունեմ յես ել,  
Թո՞ղ յես ասլեմ ինձ համար, քեզ ել տամ ձրի:  
Զեռքերս մի կապի յե՞ : Թույլ տուր հարստանամ՞,  
Թող շա՞տ ցանեմ, շա՞տ հնձեմ, բաժի՞նդ վերցրու:  
Թո՞ղ ունենամ, վոր տամ ե՞ , ամ'ր, կե՞ր, վոր կշտանաս  
Ի՞նչ ես ուզում, ել ի՞նչ ես վեետուրներս ցրում :

Սանթրոսն այնպես ե խոսում, վոր կարծես թե Սողոն  
Նրան մոտիկ դաշնակից, դավադիր ե արդեն,  
Վորի զեմ ինքն իր սրտի գաղտնիքները զեղում  
Ու քննում ե նրա հետ ընտանեկան հարցել:  
Գյուղլիորհրդի նախագահն անոգնական լուսմ  
Ու տալիս ե աչքերով հավանության նշան:  
Բարձրացընում ե միայն զինու թասը լեցուն  
Հանուն սիրո, հաշտության ու միության :

ՎԵՅՏԻՐՈՒԹ ԴԱՅԱԽ  
ԳԻՄՈՒԵՄՆԵՐԸ

Դիմումները, դիմումները, դիմումները:  
Դրսում բռւքն և պարում նման վութորկի:  
Ասես սպիտակ անհամար դիմումներ են,  
Թափվում են անվերջ եղ ասոյն վոճորքից:  
Սարդը հյուսել և քնչում իր վոստայնը:  
Եսկ ինքը չկա: Սպասում և թաքուն:  
Գյուղխորհուրդ: Նստել և ընկեր Գարսեանը:  
Իսկ գեմք՝ սեղանը: Հսկա թղթակույտ:  
Դիմումներ են: Բոլորն են: Գյուղն առաջինն է:  
Ուրեմն դառել և համաստարած:  
Բայց ուր ե, չեն զիմել չովասը, լաշինը,  
Ու ելի մի քանի ավարա:  
Չաթնանց Սանթրոսը նույնակես և զիմել:  
Սողոյի ձեռագիրն ե... զրել և Սողոն:  
Մաքում բողոքում ե: Ու հետո սրաի մեջ  
Կասկած ու յերկուլ և սողում:  
Սարդը ծածկել և փոշոտ ապակին:  
Իսկ ինքը չկա: Սպասում և անսես:  
Ժպտում և Սեանը: Արդյոք չմաքրի<sup>o</sup>:  
Հաճելի յե սարդի ծրագիրը քանդել:  
Չարժանք ե: Փախչում են լաչինն ու չովասը,

Իսկ Սանթրոսն ուզում ե մտնել կոյլեկտիվ:  
Կարծես թե ջրերը մի քիչ պղտորված են:  
Այս ի՞նչ յերևույթ է, այս ի՞նչ բարդ հաշիվ:  
Նստած մտածում ե ընկեր Գարսեանը:  
Յերեք հարյուր յերեսուն լնտանիք:  
Կարո՞ղ ե արգյուք նա գտնել պատասխանը,  
Կարո՞ղ ե այս մեծ աշխատանքը տանի:  
Իսկ Սողոն: Կողնի՞ վոր: Սողոն չի՞ խափանի:  
Ինչպես վոր արագ նա գտնան ժամանակ:  
Գյուղի կեսը հանեց նա ընդդեմ Սեանի:  
Սեանը մնաց համարյա թե մենակ:

ՄԱԿԱՀԱ

Յեվ ի՞նչ եր հանցանքը: Բեխերը խուզիւ եր:  
Այս, պաշտպաննել եր թոփալ Աբելին:  
Շրջանի առաջ նրա հարցը հուզել եր:  
Նա ձայնն ստացել եր ելի:  
Բայց չե՞ վոր Արելն խոկական կուլակ չեր:  
Սողոն հալածում եր նրան անսեղի:  
Մինչդեռ պաշտպանում և Գործկոմի առջե  
Իսկական կուլակ իր հորյեղբոր տղին:  
Յեվ նա պայքարում եր գլաւ զեմ: Սակայն  
Սյապես գուրս յեկավ, վոր իրեւ թե Սողոն  
Անշեղ կոմունիստ ե: Սեանը՝ հակա:  
Քայքայլած մի տարր ե: Ոտար ե ու խորթ:  
Մի անգամ խմել եր: Ասին՝ «միշտ և հարբում»:  
«Բեխերը խուզել ե, վոր գյուղը քանդի»:  
Կանանց համբուրել ե կոլխոզի աբառում»:  
«Խոտ ե գողացել մարտագի՞ց, թե հանդից»:  
Սեանն շխատող, պայքարող մի տղա յե:

Կուսշարքերն անցավ նա կարմիր Բանակում :  
Ապական չունի շատ : Գյուղում անթայֆա յի .  
Իսկ Սոլոն հեշտ և մարդիկ հավաքում :  
Կենարոնում հայտնի յի Սոլոյի անունը :  
«Մասսայից սիրված , նվիրված նախադահ» :  
Սոլոյին սիրում են : Բոնում : Պաշտպահում են :  
Թայֆան մեծ և գյուղում : Բոլորն ազգական :  
Սրան սահածեր ե , նրան ել քավոր ե ,  
Մեկին աներձագ ե , մյուսին փեսացու :  
Իսկ չերտավորման ցուցակում չքայլոր ե :  
Եհ , պետք ե նրա հետ զանել մի լեզու :  
Գյուղի կեսը նրան-Սոլոյին ե նայում :  
Յւթե նվիրվի նա , սրաով աշխատի ,  
Կաճի կոլեկտիվը , կգառնա կայսւն  
Թեկուզ ուժերով ել իրենց աղքատիկ :  
Բայց Սոլոն : Կողնի՞ վոր : Սոլոն չի՞ «սպայքարի» :  
Սոլոն չի՞ քայքայի կոլեկտիվ աշխատանքը :  
Սոլոն չի՞ ձանաչում ուրիշ վոչ մի կարիք ,  
Բացի իր վառքից ու յեսից սեփական :

Ես դասակարգային պայքարն սպանեց մեկ :  
Ես կուլակներն ել չեն վերանում :  
Թույլ տան՝ բոլորին ել կոլխոզ ընդունե՛ս ,  
Աւ հարցը վակես դրանով ...

---

Թափիվում են , գալիս են ելի զիմումները :  
Սարգը հյուսել ե վոստայն ու չկա :  
Մանում և Սոլոն : Սաստիկ դժգուննել ե :  
Այս , նա խմել ե «յերկու ստական» :  
— ՈՓ , մեռանք , -ասում ե , -քնից զարթնելինք ,  
Տեսնելինք արդեն սոցիալիզմ ե գյուղում :  
Նստելինք հողան ու մի լավ խմելինք :  
Եւ վոչ աշխատանք , ու վոչ ել ժողով :

ՅՈԹԵՐՈՌԻ ԴԼՈՒԽ

Ժ Ա Պ Ա Վ Բ

Կամբջի մոտ մի անդամ կանչեց կատարածում .  
— Կենտրոնից մարդե յեկել, ժողով ե հե՛յ, ժողո՞վ . . . :  
Բավական եր: Յեկ ահա՞ տաղնապ: Իրարանցում:  
Դեպի գպրոցն են հոսում ձյունը կոփոկակելով:  
Շոտառում են, աղմկում ու ձեն տալիս իրար,  
Զյունաթաթախ տրեխներն ամուր խոտում գետնին:  
Ներս են լցում, ճիսավում, ճղմում փոր իրան:  
Քիչ ե մնում վոր Մուքոն հարեանին հեծնի:

Ու կենդրոնից զործուղված յերիտասարդ աղեն  
իր զեկուցումն սկսեց տագնազալի խանդով:  
Եկ զեկուցո՞ւմ եք, արդյոք, թե սրտի հորդ հեղեղ՝  
Կաղնիների դարավոր արմատները քանդող:  
Ջայնը սաստիկ կտրված՝ չնչափողն ե քերում:  
Բայց նա ձայն ի՞նչ ե անում: Նա խոսում ե կրկին:  
Նա խոսում ե քրտնաթոր իր ձեռքերի, զեմքի  
Արագաշարժ զծերով, գլխով ու աչքերով:  
Նա այնպես ե կրակվում, փոր ուղում ե՝ կարծես  
Այրել, ինչ հին ու խավար, իր հրաշեկ սրտով,

Բոլոր հարցերը խրթին մի վարկյանում ողարդել  
Ու նոր կյանքը կառուցել յերկու ակնթարթում :

Զեկուցողի մոտ նստած՝ չողշողում և Սողոն:  
Ու նայում ե ժողովին հպարտ, աքլորագիլի:  
Կտրծես թե ինքն ե խոսում այլքան վարժ ու վորորի,  
Կարծես ինքն ե խոսողին գիծ, ուղղություն տալիս:  
Մաքերի ամպը ձակտին, զանգը ջլուտ ձեռքում  
Մոտածում ե Գարսեանն իր մէջ խորասուզված:  
Կամ անհամբեր, ջղային գիմումները թերթում:  
Ու նայում ե ժողովին ուրախությամբ հուզված:  
Քավոր Մուքոն կենդանի լսողություն ե վողչ.  
Զեկուցողին ե նայում՝ առաջ թեքված մի քիչ՝  
Բերանը լայն բաց արած վորապես ժայռի խոռոչ  
Բեխ միրուքի անթափանց մացառների միջից:  
Իսկ սահահեր Մուշեղը՝ սրտում յերկու խլուրդ,  
Յերկու դիմում ե պահել յերկու զրպաններում՝  
Մեկը-կոլխոզ մտնելու, մյուսը՝ գուշս զալու:  
Իսկ առայժմ լսում ե, լսում ու համբերում:

Զեկուցումը վերջացավ ճայթուն ծափերի տակ:  
Ընկեր Սողոն, հաղթական, իջ քրտինքը սրբեց:  
Մեկը քնից վեր թուալ. ճայթեց բուռն ծիծալ:  
Հետո հարցել տեղացին կարկտի պես:  
Դիմումները քննեցին: Ալեքսանին հասավ:  
Նա վեր կացավ, կարմրեց ու սկսավ խոսել.  
Յւս գիմել եմ զյուղխորհուրդուրդ: Բաժանվել եմ, ասավ,՝  
Բնդունեցեք, ընկերներ, հարազատ եմ յես ել:

—Թուրլ տուր, ընկեր նախադահ, —առարկում և Սողոն, —  
Մի շան գլուխ կա հստեղ, շատ խորամանկ հաշիվ...  
Մենք կոլեկտիվ ենք մտել ամբողջ անով, տեղով,  
Աւ չենք կիալել, չենք դառել յերկու, յերեք բաժին:  
Վոնց վոր ընկեր Արեգուն. հորը թաղնում և տուն  
Ինքը մենակ և զալիս ու կոլեկտիվ մանում:  
Նա ուզում ե, ընկերներ, կոլեկտիվը քանդել:  
Զի կարելի, ընկերներ: Պետք ե կամ գես, կամ զեն:  
Կամ թողիք հորն ել բերի, կամ թող ինքն ել չփա:  
Սուս ե, նրանց մեջ կոխի, բաժանություն չկա:  
Գյուղաբնորչուրդը չի քնած: Սողոն իսոս չի ուսում:  
Զի հաստատիկ եղակիսի սարքած բաժանություն:

Հարցը լուրջ եր չափազանց ու խորամանկ դրված:  
Այո: Պետք չե ընդունել կեզծ բաժանվածներին:  
Սողոն մեջտեղ եր դրել անհաղթ մի պատրվակ:  
Աւ վոչ վոք սիրո չեր անում յենի հակածառի:  
Այո: Վոչ վոք չի ուզում, վոր չարեանն իրա  
Կիսատ մանի կոլեկտիվ, կամուրջ թողնի յետե:  
Լավ ե, թե վատ՝ միասնին: Առաջ տալով իրար:  
Մինչև ուղին հարթի, բայցի հետպէտե:  
Ամեն մեկը, վոր մտել ու մանում և հիմա  
Կոլխոզական հոսանքի ջրապառայի մեջ, —  
Հարեանին և նայում: Յեթե գնում ե նա,  
Ապա ինքն ել ե սկսում դեպի առաջ զիմել:  
Եսկ յեթե նա տատանվում ու նայում ե յետե,  
Հետ դառնալու նշաններ թողնում ճամբի վրա,  
Նա շտապում ե ազգեն իրեն ափը նետել,  
Վերադառնալ մի վայրկյան հարեանից առաջ:

Քչերն են, վոր անվհաս առաջ են ընթանում:  
Պայծառ աչքերը հառած աղասարար տիփին,  
Նրանք գնում են ընդում ալիքների, քամու,  
Վոչ մի արգելք չի կարող նրանց զինաթափի:  
Նրանք են ջուրը ճեղքում, բացում ձանապարհ,  
Աւ նախ առաջ են տանում համառ ու անզիջող,  
Այդ նրանք են մաքառում, քայլում հերոսարար  
Թշնամական վայրենի վոռնոցների միջով:

Այն, ինչ վոր Սողոն ասամ Ալեքսանի մասին,  
Շատ շատերին պղտորեց. «Ճիշտ ե ասում»—ասին:  
—Ի՞՞ո՞ւ հորը չի բերում, ինքն և մենակ զիմել...  
—Ի՞՞ո՞ւ իմանանք՝ ի՞նչ անհայտ խորհուրդ կա սրտի մեջ...  
—Յերկու մսուր ե ուզում հոր խելացի վորդին...  
—Վոր հոր տանը աշխատի, կոլեկտիվում ուտի...  
—Վոր եղակն ե լինելու, զիմումս յետ տվեք...  
—Բոս եյո թյան խոսեցեք... միք ազմկի, տղեք...  
—Թո՞ւյլ տուր, թո՞ւյլ տուր, —տաքացավ տեղից Հովաս գ  
Քեռին

Աւ զոռ ապավ սրտմտած՝ լիպին ու ձեռքերին: —  
Զեք ընդունում իմ տղին... ի՞նձ ուր եք անպատվում,  
Դուք եղակն եք, չընկերներ, կեզծն, անկեզծը զատում:  
Ո՞վ ե եստեղ հարազատ՝ յի՞ս, թե Զաթնանց Սողոն,  
Վոր իր կամ քով չմասվ, այլ ամոթո՞ւ, զոռո՞վ:  
Իմ տղին մի՞ք ընդունի, ընդունեք Սանթրոսին,  
Տեսնենք՝ հզուց ո՞վ ո՞ւմ հետ բարձր կիսոսի...  
Հետզետե սաստկացավ թայֆայական վողին,  
Ել վոչ վոք չի խայում, չի նայում վոչ վոքի:  
Աւ վեր կացավ Գարսեանն, ուժգին զանգահարեց,

Զանգը խփեց սեղանին ու ջղային դռուց :  
Տիրեց ծանր լուսություն : Նա խորը շունչ առեց  
Յեվ սկսեց՝ սե, աչքերն Ալեքսանդրին հառած :

Յեվ իր զիծը հաստատուն շարունակեց ելի :  
Իսկ ժողովը միաձայն անցավ Սևանի կողմէ  
Յեվ Ալեքսանն ընդունվեց ծափով ու ազմուկով :

— Ինկեր Սողոն, ընկերներ, հարցը դրեց տղիկ :  
Այո, մենք չենք ընդունի կիսատ յեկողին :  
Տեսակետը ճիշտ է : Բայց ընկեր Սողոն հետո  
Խոշոր սիալ կատարեց . . . ուղիղ տեսակետով :  
Նա ուղում է շալրտել յերխոսարդ տղին  
Դեպի ուղին հետագեմ, գեղի աշխարհը հին :  
Նրա հերը չի կալիս, ծերունի յե համատ :  
Աշխարհը չի կործանվի մի ծերունու համար :  
Բայց մենք ունենք իրավունք Ալեքսանին վահել,  
Բաղդը կապել պառավին, ապազան սպանել :  
Յես բնավ չեմ կասկածում Ալեքսանի վրա :  
Ինձ հայտնի յե մանրամաս պատմությունը նրա :  
Նա կոլխոզի շարքերում մեղ հետ կողայքարի :  
Չի հեռանա : Չի մախչի կիսաճանապաշաչից :  
Նա յեկել ե բանակից, նա մերլել ե մերոնց  
Յեվ նա կարող ե դառնալ առաջավոր հերոս :  
Նա իր հորն ել կրերի մի ժամանակ հետո :  
Քեռի Հովան ել կդա իմ խոր տեսակետով :  
Էնկեր Սողոն թող իզար իր եցն առաջ շանի :  
Մենք կոլեկտիվ կնդունենք ընկեր Ալեքսանին :  
Բնչուս ամսուտ յերկնքի կախարդական մազից  
Արեախաչ արտերին առատ մհձրե մաղի,  
Այսպես ազդեց Գարսեանն ուղեղների վրա,  
Փափկացրեց չոր կողերն ու համոզեց նրանց :  
Միայն Սողոն չգիշեց, մհաց անդրդվելի

ՌԱՐԱՓԲ

Զաթնանց գերդաստանն անհուշ որերից  
Յեղել ե զյուղում անվանի հարուստ :  
Նա զավթել ե միշտ լա՛վը հողերի :  
Ցորենն և փթել Զաթնանց ամբարում :  
Կձել ե ժամու ամպհվանու տակ  
Վորպես զարավոր մի ընկուպենի :  
Փռելով գյուղում արմատներն անստառ՝  
Ծծել ե նրա հյութը վայրենի :  
Ծծել ե ուղեղն ու սիրտը նրա ,  
Ինքն աճել փարթամ , կանաչել ե միշտ :  
Հետո տարսծել մութ գյուղի վրա  
Իր չուքը դաժան վորպես «Հովանի» :  
Իշխել ե զյուղում վորպես տանուսեր ,  
Վորպես մի վայրի կառավարություն :  
Արորն ու յեզն են նրան սնուցել  
Յարական կյանքի մութ մթնոլորտում :  
Յեկ կուչ ե յեկել թշվառ գյուղացին  
Զաթնանց զարավոր ընկուղենու տակ՝  
Աչքերը հառած ավելցուկ հացին ,  
Իր վողորդելի բաղդին անդիտակ :  
Ու յերբ վոր Զաթնանց վողորմած լիաթունը

Նրա քրտինքով լցված ամբարից  
Նրան՝ աջ ձեռով , ձախ ձեռից թաքուն՝  
Տվել ե մի բուռ բորբոսնած գարի ,  
Վերցրել ե նա ու հազար լեզան  
Արհնել ե Զաթնանց հարստությունը .  
Ու վողջ զավառում տաբածվել աշապ ,  
Զրնկացել ե Զաթնանց անունը :

Ու «Մայր Աթոռին» հայտնի յեղել  
Զաթնանց անունն ու հարկը հյուրընկալ :  
«Վեհափառն» անմահ կոնդակ է հղել ,  
Արհնել ե Զաթնանց վաշ ու ցանքն ու կալն :  
Յեկ «յերանելի» Խրիմյան հայրիկն  
Ուրախ շոյելով միշտոքն սպիտակ՝  
Հանգստացել ե Սկան գնալիս  
Զաթնանց զարավոր ընկուպենու տակ :  
Գյուղական համեստ սպաս և կերել  
Անկեղծորեն կեղծ այդ կրոնականն :  
Ու Զաթնանց բաղում մեղքերը ներել ,  
Գառավոր խղճով անցել ե Սկան  
Իսկ Զաթնանց Սանթրոսն անողոք բահով  
Ճեղքել ե զլաւին աղքատ թուշանի ,  
Հավշտակել ե ընակը սեահողն  
Ու սովոր մատնել մի տուն ընտանիք :

Մեռել ե թուշանն ետ վերքից հետո  
Յեկ ման ե յեկել Սանթրոսն անդամիթ :  
Դատարան մտած հիսուն մանեթով

Դարձել ե չհաս , չենթակա դատի :  
 Գյուղը վրդովվել , հուզվել ե սաստիկ ,  
 Անզոր զայրույթով բռունցքը սեղմել ,  
 Հաշտվել ե հետո արյունոտ փաստին  
 Յեվ իր անձարակ զայրույթը մեղմել :  
 Յեվ մոռացել են աղքատ մոռչանին ,  
 Խղճի բերանը խցկել նրանով ,  
 Վոր հայ են ավել «ավիզ որերին»  
 Բոռչանի թշվառ մոռացող կնոջ :  
 Զավթել են այսպես ու կերել մարսել  
 Զաթնանք մոռչանի հողը բերքառատ :  
 Բայց հին անումն ե վրան մնացել .  
 Գյուղում ասում են «մոռչանի քարափ» :

Զանգվի ձորափին , զյուղից քիչ հեռու ,  
 Մի ապառաժի սովերի ներքո ,  
 Շրջապատված եր պտղածառերով  
 Բոռչանի քարափին : Ու կանաչներով  
 Յերեսում եր մերկ ծառերի միջից  
 Զաթնանց Սանթրոսի տան պատշաճր ,  
 Յերբ վոր ձեզերով ձյան շերտն առաջի ,  
 Յերեք դյուղայի մոտեցան շտապ :  
 Գամփոր , կասաղի , նրանց զեմ վաղեց՝  
 Զգալով կարծես անհայտ մի վտանգ :  
 Փայտի հարվածից վոռնաց , գաղաղեց ,  
 Բայց ելի համառ պայքարի մտավ :  
 Սանթրոսն ու վորդին յելան պատշաճր :  
 Ալեքսանը ասես ուղեց բարեկ ,  
 Բայց զսպեց իրեն ու սուզ հեղնությամբ ,  
 Գունատված նայեց պատշաճրն իվեր :

— Ի՞նչ եք կամենում ... Հարցուեց Սանթրոսն՝  
 Աչից աղձատված մպիսն յերեսին :  
 — Յեկել ենք մի խիստ կարևոր խնդրով :  
 Նախ չունե կապիր , — ասավ Ազատին , —  
 Հետո հավաքվիր , քսանչորս ժամից  
 Սուս ու վուս , հանդիսան գնա մոռչանից :  
 Բոռչանի քարափին այլիս քոնը չէ ,  
 Դու վոչինչ չունես քարափի միջին :  
 Սանթրոսը մեկեն դույնը թոցրեց :  
 — Ի՞նչ ... աքսորո՞ւմ եք ... — մոնչաց  
 վորդին :

Նա մոլի բնազդով բահը վերցրեց ,  
 Բայզ անզոր վոխով չպրոտեց գետին :  
 — Զե՞ վոր յես դիմում ավի կոլխոզին , —  
 Բզավեց Սանթրոսն : Ուր գնամ , ասա ,  
 Ես սատնամանի ձմեռվան կիսին  
 Ո՞ւր եք աքսորում , ընկեր Ալեքսան :  
 Տո գալիս եմ ե՞ , սանահեր Մուշու ,  
 Ինձ ել ընդունեք , միանամ , յեղբայր :  
 Տամ տասերկու յեղ , յերեք ձի , ութ կով ,  
 Յերկու հարյուր ու յերեսուն վոչիսար :  
 Զտղացս ել արդեն Փոկն ե վրափել ,  
 Ել ի՞նչ եք ուղում սրանից ավել :  
 Ակոր ո՞ւր գնամ , սեփական տնից ,  
 Դե մորթեք , Ելի , թաղեք կենդանի :  
 Յես տուն շինել վափագով բարի ,  
 Բարձա յեմ տնկել , հասցըել բարի ,  
 Կյանք եմ մաշել ե՞ , քրտինք եմ թափել ,  
 Եղ վո՞նց եք ուղում քրտինքս լափել :

Պոռթկաց Ալեքսանն անհատավ վոխով  
 Ու պատասխանեց դառն ծիծաղով,  
 — Ե՞յ Սանթրոս աղա, եղ վո՞նց ես ճառում,  
 Ո՞ւմ քրտինքով և վաղել քո առուն:  
 Ո՞ւմ պապն ես ձորում քո բահով ընկել,  
 Ո՞ւմ հերն ե քո ես ծառերը տնկել,  
 Ո՞վ և տանջվել չողին ու ցրտին  
 Իմ պապն, իմ հերը, յես—նրանց վորդին:  
 Մեղնից ես խել, յետ տուր ելի մեզ,  
 Իսկ դու յել զնա, աշխատանք ճարի,  
 Տանջվիր մեզ նման սոված, կիսոմերկ,  
 Իմացիր մեղպես հոգաներ ու կարիք,  
 Մաքրիր մեղքերդ մի քանի տարի,  
 Թակարդ մի լարի մեր նոր կյանքի դեմ,  
 Նոր են ժամանակ կոլեկտիվ արի,  
 Աշխատիր, ապրիր մեզ հետ միատեղ:—

Ալեքսանն անզուսավ վոխով եր խոսում  
 Կյայթում Սանթրոսին և նրա տղին:  
 Քեյրութը հողված կծում եր վեզուն  
 Յեկ սպասում եր լուռ ու կատաղի:  
 Դիվական ուժով զարում եր իրեն,  
 Վոր չվերցնի բահը շալրտած,  
 Վոր անբարտավան Ռուշանանց տղին  
 Եր պապի տեղում չնկնի թիբատ...  
 Յեկ հասկանում եր թոռը Ռուշանի  
 Նրա աչքերի թունալոր լեզուն...  
 Ուստի և ցուցյ եր տալիս նա ժանիք  
 Ավելի ըմբոստ և ավելի սուր:

Զար ծղբղոցով դուրս թռավ տանից  
 Սանթրոսի կինը Հոռոմսիմ Զալոն:  
 ՀայՀոյից, թքեց նա Ալեքսանին՝  
 Կերած աղուհացն յերեսին տալով:  
 Ու հետզետե իսանվան վեծին  
 Եսնթրոսի հարսերն անդամ չխոսկան:  
 Յերեխաներն ել շոմն արձակեցին  
 Ու հայՀոյելով, լարով մեջ ընկան:  
 Սանթրոսը սաստեց ճայթող պառավին,  
 Լեղվանի հարսին ուղարկեց վերե,  
 Շունն ելի կապեց ծիրանի ծառին,  
 Յերեխաներին կարդի հրավիրեց:  
 Ու հետո խոսեց խոպտ հուզմունքով:  
 — Բնկեր Ալեքսան, Ազատի, Մուքո,  
 Յերեխաներիս վիզը միք զարկի,  
 Միք զրկի նրանց ծառեցի րերքից:  
 Ինձ ել ընդունեք, զրեք կոլխոզում:  
 Սրանից ավել ել ի՞նչ եք ուղում...  
 Պղտոր աչքերից մի կաթիւ ընկավ  
 Ու գողաց կախված թավ բեխի ծերին:  
 Հոռոմսիմ զալոն «վայ» տվեց ծնկան,  
 Լացը վարակեց նաև հարսներին:  
 Քերի Մուքոյի սիրոն ել մբմուաց  
 Ու մինչեւ անդամ հուզվեց Ազատին:  
 Միայն Ալեքսանն եր սառն ու մոայլ  
 Նայում թշնամու հուսահատ լացին:

— Վոչ լաց, վոչ աղմուկ: Քարափի տանից  
 Դուք կհեռանաք մինչեւ վաղ յերեկո,—

Հնչեց վճռական ձայնն Ալեքսանի  
Բւ Վերապարձո՞ն նըսնք յերեքով :

— Շանսատակ կանեմ յես ես լակոռին, —  
Ֆշաց մոլեզին ԲԵյրութն ու Հետո : —  
Յերեկվա գյաղեն, տկլորն, անոթին .  
Ես ի՞նչ ե դառել, ասոված իմ, ասոված :  
Զաթիանց տան վրա բերան և ծովում  
Մեզ վոնդում են հողից պապական,  
Ու վոչ մի դիմակ գետին չի փովում,  
Մտիկ ենք տալիս ոեխներս վակած :  
Ես ո՞ւր ենք հասել այ հեր, այ նանի,  
Վայ մեր նամուսին ու գերգաստանին :  
Եւ համբերելու ույժ ու սիբու չկա :  
ՅԻ՞ւթ, յերբ վերջապես մեր հերթն ել կդա :  
Քանդենք ես աշխարհն ու կարդը, վորտեղ  
Մարդը բատրակին «ընկեր» ե ասում :  
Բատրակ ե, ովհանի տըորես, մորթես,  
Ճիսլոս տաս մոթին որը քառասուն . . .

ԽՆԵՐՈՒՐԴ ԳԼՈՒԽ  
ՏԱՐԵԲԻՆ, ՄԱՐԴԻ, ՄԵՔԵՆԱՆ  
Բուքն ե պարում ոճագալար :  
Քամին իր սառ փողն ե ածում :  
Ու բքի հետ բքահալած,  
Զայն ե տալիս կտոսարածուն .  
— Սերմը՝, սերմը՝, բերեք զոհե՛ք,  
Միացրեք մի ամբարում :  
Ամբարդ բա՛ց, քավոր Մուշեղ,  
Հորդ հանի, ուստա Հարութ :  
— Վայ քո անխիզ Գարսեանին .  
Ո՞վ ես բքին հոր կհանի, —  
Պատասխանեց ուստա Հարոն  
Ու ներս մտավ սրթսրթալով :  
— Լա՛վ, սերմացուս ասենք բերի՛, —  
Պատասխանց Մուշեղ բիձան . —  
Ո՞վ կաշխատի ես ցրտերին,  
Դրսում, ես դառ բուրանի տակ :  
Հրեն Գևոն ու Ազատին  
Սերմը նորից յետ բերին տուն :  
Սարսափելի ցուրտ ե, ասին,  
Տրիերը չի աշխատում :  
Համ հարցըի, ասին՝ Սելանն

Ու Սողոն սերմը չեն զաել :  
Տես, յեթէ կա եղախի բան ,  
Յես չեմ զաի վոչ մի հատ ել :  
Երենք նստած իրենց բանին ,  
Հենց խալսին են առաջ քցում .  
Մինչեւ Սողոն հոր չհանի ,  
Յես չեմ հանի . . . ներողություն :

Ահմազաման կամպանիայի  
Ժամկեան արագ անց ե կենում :  
Մինչ վունցով դազանային ,  
Առանց մի ժամ ընդհանվելու ,  
Բուքն ե զյուղի ճամփեք լիզում ,  
Ծածկում , ծեփում դուռ ու տանիք .  
Մի չարախոս թունոս լեզու  
Խառնվում ե բուք բորանին :  
Ու վոչ մի ճարդ ժոտ չի զալիս :  
Աերմազախն անդործ կանզնել ,  
Մինչդեռ զալիս են շրջանից  
Տաղնասղալից հրահանգներ :

Դաբսեանը կանդեած բակում  
Նայում է լուռ մեքենային :  
Լեռնանում է նրա հոգում  
Մի տիրություն գերմարդկային :  
Անիվները ձնում թաղված ,  
Բուրանի դեմ հպարտ , մենակ ,  
Կարծես զյուղից վիրավորված ,  
Միտք է անում այդ մեքենան ;

Զդում ե նա մեքենայի  
Մտքերը սառն ու իմաստուն :  
Այդ սեփական մտքերն եյին  
Տարերքի դեմ կովող մարդու :  
«Յեկել ե նա մեզ ընդառաջ  
Մեր ծուռ ու մուռ վողոյներով՝  
Վորպես մի նոր կյանքի հերոս ,  
Իսկ մենք նրան տեղ չենք տալիս ,  
Գրսում , մենակ , մրսում ե նա .  
Ո , կորություն ամոթալի ,  
Ների՛ր , ների՛ր մեզ մեքենա . . . »

Վերադարձավ կատարածուն՝  
Բեխից կախված սառցե լուլան :  
— Ախպեր , վոչով հոր չի բացում ,  
Բղավելով հոգիս ելավ :

Ու հայաբվեց արիերի մոտ  
Սերմի հոգնած բրիգադան .  
Նրանք մեռան վորոնելով ,  
Վոչ մի հարմար տեղ չգտան :

— Մնացել ե միայն մի յելք , —  
Խորհուրդ արավ քեռի Մուղոն . —  
Մի լնտանիք տանից հանենք ,  
Զուլ փալասով ուղաբկենք դոմ ,  
Կամ թէ հոգան հարևանի

(Ել ճար չկա ե՞ , ինչ անենք) ,  
Սերմազիչն այսուղ տանենք,  
Վոր գիշեր ու ցերեկ բանի :  
— Այ , լավ ասավ քեռի Մուքոն , —  
Վրա տվին ժիր աղմուկով :  
— Լավ եմ ասում , գլխիդ մասաղ ,  
Բայց ո՞վ հիմի մեղ տուն կտա ,  
— Քեռի Մուքոն , Քեռի Մուքոն ,  
Իր խելացի համոզմոնքով :  
— Զեռ մի՞ք առնի , չունշանվորդիք ,  
Խորհուրդ ալի , խաթա՞ ընկո :  
Այ , Սողոյի տունը մոտիկ ,  
